

Յ. Ալլահվերտեան, մակագրեալ՝ Ուլնիա կամ Ձէյթուն լեռնային աւան ՚ի Կիլիկիա. Նկարագիր տեղական, կենսական, բանասիրական եւ լեզուաբանական. յաւետ գլետին մասն բացատրելով, գաւառական խօսիք նոցին եւ բառիք: Ի պատշաճից Տեղագրութեանս՝ յիշէ, ոչ հեռի յաւանէն զԿիւրեան լեռն եւ բերդ (յէջն 10), զՉաւտար՝ տեղի զճանապարհացն Ձեթունի (130), զչորեսին թաղս աւանին (11) կոչեցեալս Վերի թաղ, Օրթամահալլէ (միջին թաղ), Ղարդալար եւ Պօշ-պայըր, յետոյ յաւելու եւ զՎարի թաղ (13), Ս. Սարգիս եկեղեցեալ. իսկ առաջնոց եկեղեցիքն են, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Աստուածածին, Ս. Յակոբ, եւ Ս. Յովհաննէս: Յորմն Ս. Յակոբայ (որ շինեալ է յամի 1847), ագուցեալ է հին վեմ արձանագրաւս այսուիկ.

«Շինեցաւ տաճարս ի թվին Հյց ՋՂԴ (1545) ի հրպեթեան (հայրապետութեան) Տն՝ Սիմէոն կթին՝ (կաթողիկոսին): Ի բնակալութե Տաճկաց Սուլիման Խոնդքարին. գոր ՚ի շարժէ կործանեալ էր, նոր նորոգեց ձեռամբ մղտեսի Գարբիէլն»:

Ի բնական բերոց եւ ՚ի սեռէ բուսականաց՝ յիշէ բազում տեսակս քաջ գինեբեր այգեաց (64) եւ պտոցոց, եւ յայլոց ազգաց՝ զԳաբ ՚ի Պրիտ լերին, զՇինկիրար վարունգ, զՄուշկ՝ ոչ սովորական անուանեալն, այլ կանգառաձէ իմն բթաչափ՝ մշկահոտ, զՋաղացոյի տերեւախիտ խոտ (95): Ի հաւուց ազգէ՝ զԿաքաւ շատ՝ յառապարս (68): Գլխաւոր բերք երկրին եւ վաճառք՝ են խաղողն եւ չամիչ, մեղր, երկաթ, եւ մորթ այծենի:– Առ գրուած հեղինակին առաքեմ զցանկացողս Կենսական եւ Բանասիրական գիտելեաց, նշանակելով ՚ի ստորեւ զցանկ բովանդակութեան գրոցն (յ՛200 էջս փոքր ութաձալ)²⁴⁷:

²⁴⁷ «Մասն Ա. Դիրք. Շէնք. Թիւ բնակչաց. Եկեղեցիք. Վարժարանք. Վանորայք:– Մասն Բ. Ծնունդք եւ Մկրտութիւն. Հագուստք, տնական կարասիք եւ կեանք. Ուտեստք. Լուացարարութիւն լաթեղինաց եւ մաքրութիւն մարմնոյ: Բարոյք. Կրօնական եւ Բարոյական հանգամանք. Ազգային կեանք: Ընկերութիւնք. Երկրագործութիւն. Արմտիք. Բոյսք. Կենդանիք: Արուեստք եւ Վաճառականութիւն: Որսորդութիւնք. Նշանատուութիւն եւ Հարսանիք. Գաղղիական ախտ. Հիւանդութիւն եւ Մահ. Հանդէս թաղման:– Մասն Գ. Աւելորդապաշտութիւնք. Օրհնութիւնք կամ Բարեմաղթութիւնք. Անէժք. Երդմունք. Վրէժխնդրութիւնք. Առակք. Յանգաւոր գրոյցք: Պատմութիւնք.